

## «Տեղեկատվական համակարգեր» առկա և հեռակա բակալավրիատի կրթական ծրագիր

### *Ընդհանուր տեղեկություն*

Բիզնեսի ներկայիս զարգացումները պայմանավորված են նորագույն տեխնոլոգիաներով, որոնք ստեղծել են նոր հնարավորություններ: Տեղեկատվական համակարգերը և տեխնոլոգիաները ուղեկցում են ամենուր, հատկապես բիզնեսի և տնտեսության կառավարման ոլորտում: «Տեղեկատվական համակարգեր» բակալավրական ծրագիրը նպատակաուղղված է ժամանակակից բիզնեսի և կառավարման ոլորտում նորագույն համակարգչային տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի ներդրման և կիրառման ունակություններ տրամադրելուն: Այսօր ֆինանսական, բանկային և կառավարման ոլորտի յուրաքանչյուր մասնագետ պետք է տիրապետի համակարգչային հավելվածներին, ցանցերին և այլ տեխնոլոգիաներին: Շրջանավարտները բավականաչափ խորությամբ կտիրապետեն հաշվողական համակարգերի տեխնիկական և ծրագրային ենթահամակարգերին: «Տեղեկատվական համակարգեր» կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները կուսումնասիրեն նաև բիզնեսի նոր ոլորտները՝ ինչպես օրինակ առցանց առևտուրը, թվային բիզնեսը, էլեկտրոնային բանկային գործը և կյուրացնեն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների կառավարման ժամանակակից մոդելները և յուրահատկությունները, որոնք ներառում են կառավարման նորագույն մոդելներ:

Ծրագրի շրջանակներում որպես դասախոսներ ներառվում են նաև համակարգչային ցանցերի, ծրագրավորման, ստարտափ նախագծերի իրականացման և այլ փորձառու մասնագետներ ՏՏ ոլորտի գործող կազմակերպություններից: Փորձառությունները կազմակերպվում են մեր երկրի տեղեկատվական տեխնոլոգիաների հայտնի ընկերություններում, նախարարություններում և պետական այլ կառույցներում, ինչպես նաև մասնավոր բիզնեսում:

### *Մասնագիտության նկարագիրը*

«Տեղեկատվական համակարգեր» մասնագիտությունը գտնվում է տնտեսագիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների հատույթում: Այդ մասնագետը նախ և առաջ տիրապետում է տնտեսագիտությանը, բիզնեսի և կառավարման տեսությանը և միաժամանակ օժտված է համակարգչային գիտելիքներով: Տեղեկատվական համակարգերը անհրաժեշտորեն կիրառվում և

առավել արդյունավետ են դարձնում այնպիսի գործառույթներ, ինչպիսին են հաճախորդների և մատակարարների հետ կոմունիկացիան, վաճառքին հետևելու գործընթացները, բիզնես-գործընթացների կառավարումը, ինչպես նաև գլոբալ ցանցում (ինտերնետում) կազմակերպվող մատակարարման, վաճառքի, մարքեթինգային և ֆինանսական ծառայությունները:

Ծրագրի շրջանավարտը կտիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի վերաբերյալ մասնագիտական ունակություններին՝ համակարգչային ցանցերի, տվյալների բազաների կազմակերպման և տվյալների վերլուծության, կիրառանվտանգության շրջանակներում, ինչպես նաև WEB դիզայնի և ծրագրավորման հիմունքներին:

Բակալավրական ծրագիրն իր մեջ ներառում է նաև տնտեսագիտական առանցքային մոդուլներ, ինչպիսիք են ընդհանուր, միկրո և մակրո տնտեսագիտությունը, ֆինանսները, կառավարումը, մարքեթինգը, հաշվապահությունը և բիզնեսի հիմունքները: Վերջիններս անհրաժեշտ են բիզնեսի տարբեր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի հետ աշխատանքի և ներդրման գործընթացներում:

### **Աշխատանքի հնարավորություններ**

Ներկայումս տնտեսության և բիզնեսի ցանկացած ոլորտում առկա է այնպիսի մասնագետների պահանջ, որոնք տիրապետում են համակարգչային տեխնոլոգիաներին: Այդ իսկ պատճառով մեր շրջանավարտները աշխատուժի շուկայում ունեն ընդհանուր առմամբ մեծ պահանջարկ:

Կրթական ծրագիրը պատրաստվել է՝ հաշվի առնելով արևմտյան բուհերի փորձը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում մասնագիտական չափանիշներին համապատասխան և նպատակաուղղված է մասնագետների պատրաստմանը, որոնց պահանջարկը հայրենական տնտեսության մեջ ամեն տարի աճում է:

Նախ և առաջ ծրագրի շրջանավարտները պահանջված կլինեն տեղեկատվական տեխնոլոգիաների, հեռակոմունիկացիոն (բջջային օպերատորներ, ինտերնետ պրովայդերներ) և ինտերնետային բիզնեսով զբաղվող ընկերություններում՝ որպես ոլորտի կառավարման բարձրագույն կրթությամբ տնտեսագիտական և կառավարչական գիտելիքներ ունեցող մասնագետներ, որոնք կզբաղվեն այդ ընկերությունների կառավարմամբ, ֆինանսական և մարքեթինգային գործառույթներով: SS ընկերությունները մեր երկրում առաջարկում են այդ մասնագետների համար համեմատաբար բարձր վարձատրվող աշխատատեղեր: 2018 թվականին ակտիվ գործող SS ընկերությունների թիվը հասել է գրեթե 800-ի՝ ապահովելով աննախադեպ 23% աճ 2017թ.-ի համեմատ: Այդ ընկերությունների մոտ կեսը արտասահմանյան են: 2008-2018թթ. տարեկան միջին հաշվով հիմնվել է մոտ 54 SՏՏ ձեռնարկություն: Յուրաքանչյուր տարի գործող ընկերությունների քանակը ավելանում է, օրինակ՝ 2018-ին գործող ընկերությունների քանակը ավելացել է շուրջ

150-ով, որի հետևանքով առաջ է գալիս բարձր որակավորում ունեցող աշխատուժ ներգրավելու խնդիրը, ինչը վկայում է այն մասին, համապատասխան ներուժ ունեցող աշխատուժի նկատմամբ պահանջարկն աճում է:

Բացի SS ոլորտից, շրջանավարտը կարող է աշխատել այլ բնույթի բիզնես ձեռնարկություններում և կազմակերպություններում՝ զբաղեցնելով մի շարք պաշտոններ, որոնք առնչվում են համակարգչային ցանցերի, WEB դիզայնի, տվյալների բազաների կառավարման հետ, ինչպես օրինակ բիզնես վերլուծաբաններ և տվյալագետներ, էլեկտրոնային բիզնեսի, էլեկտրոնային բանկային գործի, ստարտափ համակարգերի կառավարիչներ, ինտերնետ-շուկայագետներ:

Կրթական ծրագրի շրջանավարտները կարող են զբաղեցնել նաև տարբեր բնույթի մասնագետների պաշտոններ կառավարության, ճյուղային նախարարությունների և պետական մարմինների տեղեկատվական տեխնոլոգիաների ստորաբաժանումներում և վարչություններում: